«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	«Սովորողների ուսումնական ձախողումների սոցիալ-հոգեբանական պատճառները»
ԱՌԱՐԿԱ	Տեխնոլոգիա
ՀԵՂԻՆԱԿ	Լուսիկ Սահակյան
ՔԱՂԱՔ	Երևան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Հ. 152 հիմնական դպրոց

Բովանդակություն

Ներածություն 3

1. Սովորողների ուսումնական ձախողումները որպես հոգեբանության ուսումնասիրության հիմնախնդիր. 6
2. Ուսումնական ձախողում հասկացության վերլուծություն 8
3. Սովորողների ուսումնական ձախողումների սոցիալ-հոգեբանական պատճառները. 13

Եզրակացություն. 15

Օգտագործված գրականության ցանկ. 17

Ներածություն

Սովորողների ուսումնական ձախողումների պատճառների ուսումնասիրությունը կարևոր խնդիրներից մեկն է հանդիսանում:

Շատ տարբեր պատճառներ կարող են նպաստել ուսումնական ձախողումների առաջացմանը

Ուսումնառության ընթացքում ձախողումների պատճառներ կարող են լինել դասավանդվող առարկաների ոչ լիարժեք ընկալումը, անհետաքրքրությունը դասավանդվող առարկաների նկատմամբ, աշակերտի և ուսուցչի փոխհարաբերությունները և շատ այլ պատճառներ:

Օրինակ՝ եթե աշակերտը լավ չի ընկալել նյութը, ապա այդ իրավիճակն ինքնին ուսումնական ձախողման պատճառ է հանդիսանում: Կամ դպրոցականը կարող է ընդհանրապես չհասկանալ դպրոցում դասավանդվող առարկան և ուսման ընթացքում բազմաթիվ ձախողումներ ունենալ: Հետևաբար ձախողումներից խուսափելու համար անհրաժեշտ է հասկնանալ դպրոցականին, աջակցել նևան,որպեսզի վերջիններս խուսափեն ձախողումներից և կարողանան ճիշտ կատարեկ հանձնարարվածը:

Միայն դասավանդվող նյութի թերընկալումը չէ, որ կարող է ազդել աշակերտի առաջադիմության վրա, բազմաթիվ այլ խնդիրներ ևս կան, որոնք ուսումնական ձախողումների պատճառ կարող են հանդիսանալ:

Սովորողների ուսումնական ձախողումների վեևլուծության համար անհրաժեշտ է կարևորել սոցիալ-հոգեբանական դործոնները, որոնք իրենց ազդեցությունը ևս կարող են թողնել աշակերտի առաջադիմության վրա:

Այսպիսով այս հետազոտական աշխատանքում կանդրադառնանք վերոնշյալ խնդիրներին, առավել մանրամասն կներկայացնենք ուսումնական ձախողումների պատճառները և վերջիններիս խորացմանը նպաստող գործոնները:

Ուսումնական ձախողումների պատճառների խորքային ուսումնասիրությունը թույլ է տալիս գտնել այն լուծումները, որոնք կխոչընդոտեն դպրոցականների առաջադիմության վատթարացմանը:

Ուսումնական անհաջողությունների պատճառները բազմազան են:

Այդ խնդիրներից կարող են նաև համարվել ինքնահաստատման նպատակով սովորողի դրսևորած պահվածքը:

Ակնհայտ է, որ սովորողի պահվածքի վրա ազդում են տարբեր հանգամանքներ, որոնք կարող են կապված լինել դասընկերների, ուսուցիչների, ծնողների փոխհարաբերությունների հետ: Իսկ այդ ազդեցությունն էլ կարող է բացասական հետևանք թողնել սովորողների ուսումնական առաջադիմության վրա:

Տարիքային խնդիրները կարող են պատճառ դառնալ սոցիալ-հոգեբանական իրավիճակի: Պատահական չէ, որ սովորողի տարիքում շրջապատող աշխարհը երեխաները տարբեր կերպ են ընկալում:

Ուսումնական ձախողումների պատճառներից կարող է հանդիսանալ սովորողների մոտ նկատվող դեպրեսիայի դրսևորումը, որը տարբեր հանգամանքների ազդեցության ներքո կարող է առաջանալ:

Դեպրեսիայի մեջ գտնվելն իր բացասական ազդեցությունն է թողնում աշակերտի առաջադիմության վրա և ուսումնական անհաջողության պատճառ է հանդիսանում:

Սովորողների մոտ դեպրեսիայի դրսևորումը կապված է տարբեր խնդիրների հետ:

Այդ խնդիրները կարող են կապված լինել տարիքային խնդիրների, ընտանիքում տեղի ունեցող իրադարձություններ և այլ հանգամանքների հետ:

Սովորողների ուսումնական ձախողումների պատճառները բազմաթիվ կարող են լինել, ուստի երեխաներին անհրաժեշտ է ուղղություն ցույց տալ և աջակցել՝ ուսումնական ձախողումներից խուսափելու համար:

Թեմայի արդիականությունը: Աշխատանքը կարևոր է նրանով, որ թեման խորն ուսումնասիրության կարիք ունի և անհրաժեշտ է այն հետազոտել՝ սովորողների ուսումնական ձախողումների պատճառները հասկանալու և խոչընդոտելու համար:

Կարևոր է ուսումնասիրել և վերլուծել այն բոլոր պատճառները, որոնք ազդում են սովորողների ուսման առաջադիմության վրա և նպաստում են ուսումնական գործընթացի ձախողմանը:

Թեմայի ուսումնասիրության համար կարևոր է ներկայացնել այն հիմնական պատճառները, որոնք կարող են ազդել դպրոցականի առաջադիմության վրա: Օրինակ՝ այդ պատճառներից կարող են լինել դպրոցական ծրագրերում պարբերաբար կատարվող փոփոխությունները, դպրոցներում դասավանդվող առարկաների թերընկալումը, ընտանիքի անդամների, դասընկերների, մտերիմների,

ուսուցիչների հետ լարված փոխհարաբերությունները, դպրոցականների կողմից ագրեսիայի դրսևորումը, կոմպլեքսները և տարիքային այլ խնդիրներ:

Նշված պատճառները կարող են բացասական ազդեցություն թողնել սովորողների ուսման առաջադիմության վրա: Հետևաբար, կարևոր է վեր հանել բոլոր պատճառները և խնդիրները՝ ուսումնական ձախողումներից խուսափելու համար:

Թեմայի ուսումնասիրությունը խիստ արդիական է, քանի որ այժմ էլ դպրոցականները բախվում են նման խնդրի հետ, երբ բազմաթիվ պատճառներ կարող են ազդել նրանց ուսման վրա և բացասական հետևանք թողնել սովորողների առաջադիմության վրա:

Հարկավոր է առանձնացնել այն փաստը, որ սոցիալ-հոգեբանական պատճառները խիստ մեծ ազդեցություն կարող են թողնել սովորողների կրթական գործընթացի վրա և ուսումնական ձախողումների պատճառ հանդիսանալ: Ուստի այս տեսանկյունից խիստ կարևորում ենք թեմայի ընտրությունը և ուսումնասիրությունը:

Աշխատանքի հիմնական նպատակն է ուսումնասիրել սովորողների ուսումնական ձախողումների պատճառները, ներկայացնել սոցիալ-հոգեբանական պատճառները, ինչպես նաև մշակել մեխանիզմներ՝ դրանք բարելավելու համար:

Սովորողների ուսումնական ձախողումները որպես հոգեբանության ուսումնասիրության հիմնախնդիր

Ուսումնական գործընթացում աշակերտները հանդիպում են բազմաթիվ խնդիրների և խոչընդոտների, որոնք պետք է կարողանան հաղթահարել և թույլ չտան ուսման վրա բացասական ազդեցություն ունենալ:

Հատկանշական է այն հանգամանքը, որ անգամ շատ փոքր խնդիրները և տարբեր պատճառներ կարող են բացասական ազդեցություն ունենալ աշակերտի ուսման և առաջադիմության վրա:

Այսօր էլ ուսումնական ձախողումների վերացումը շարունակում է դպրոցների, բուհերի, քոլեջների և այլ կրթական հաստատությունների կարևոր խնդիրներից մեկը լինել: Ուստի պատահական չէ, որ կրթական հաստատությունների առաջնային նպատակն է հանդիսանում գտնել ուսումնառության ձախողումների պատճառները և թույլ չտալ, որ դրանք ազդեն սովորողի առաջադիմության վրա:

Ուսումնական անհաջողությունների պատճառներից կարող են հանդիսանալ դասավանդվող առարկաների սխալ ընկալումը, սոցիալ-հոգեբանական վիճակը, դպրոցականների միջև ստեղծված լարվածությունը, տարիքային խնդիրները, ուսուցչի հետ փոխհարաբերությունները [12, էջ 54], շրջակա միջավայրի ընկալումը և այլն:

Ձախողման պատճառ նաև կարող է դառնալ սովորողի առանձին անհատականություն լինելու անտեսումը:

Այս խնդիրը հաճախ ենք տեսնում դպրոցներում, երբ դասավանդողը անտեսում է դասավանդվողի կարծիքը, վերլուծությունը, ինչ-ինչ հարցերի վերաբերյալ մտորումները և այլն:

Այսպիսով բախվում ենք մի շատ կարևոր խնդրի հետ, որը, ինչքան էլ ցավալի է, բայց ոչ ամբողջությամբ է հաղթահարված: Նման վերաբերմունքը կարող է դասավանդվող առարկաների նկատմամբ անտարբերության առաջացման պատճառ հանդիսանալ, որն էլ խոչընդոտում է առաջընթացը և հիմնական պատճառներից մեկն է:

Ե՞վ դպրոցում, և՞ տանը սովորողին պետք է որպես անհատականություն վերաբերել, ինչը կօգնի հասկանալ վերջինիս և կխուսափենք ձախողումից: Եթե դպրոցում աշակերտների նկատմամբ անհատական մոտեցում ցուցաբերվի, ապա ինչ-որ առումով կնպաստի, որ աշակերտը սխալներ թույլ չտա և դրական ազդեցություն կունենա սովորողի առաջադիմության վրա:

Նման մոտեցումը կարևոր է ոչ միայն դպրոցում ցուցաբերել, այլ նաև տանը:

Սովորողների նկատմամբ տանը ևս պետք է անհատական մոտեցում ցուցաբերել, քանի որ եթե դպրոցականի և նրա ծնողների միջև խնդիրներ առաջանան, անշուշտ, դրանք նույնպես իրենց ազդեցությունը կթողնեն երեխայի ուսման և առաջադիմության վրա: Քանի որ և՛ ընտանիքում, և՛ դպրոցում երեխայի հանդեպ անուշադիր վերաբերմունքը կարող է սովորողի մոտ ագրեսիայի դրսևորման պատճառ դառնալ:

Ուսման մեջ ձախողումների պատճառները կարող են բազմազան լինել: Օրինակ՝ ժամանակակից ընտանիքներն ունեն մեկ կամ երկու երեխա, ինչը ինչ-որ առումով ազդում է դպրոցականի վրա և ձախողման պատճառ դառնում [2, էջ 14]: Դպրոցականների համար անգամ ուսումնական ծրագրերի փոփոխությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ:

Եթե վերցնենք կրթական համակարգը, ապա կտեսնենք որ բոլոր երկրների կրթական համակարգերում առկա են բազմաթիվ թերություններ, որոնք ինչ-որ առումով ևս ազդում են ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպման վրա:

Ինչպես նշեցինք ուսումնական ձախողումների պատճառներից կարող են լինել պարբերաբար փոփոխության ենթարկվող կրթական ծրագրերը:

Նման իրավիճակում սովորողը նոր խնդիրների առջև է կանգնում: Կարող ենք ասել, որ հենց ուսումնական գործընթացում պարբերաբար կատարվող փոփոխությունները կարող են բացասական ազդել երեխայի առաջադիմության վրա: Քանի որ սովորողը, գուցե և չընկալելով հին ծրագիրը ստիպված է լինում սերտել նորը:

Ուսումնական գործընթացում կատարվող փոփոխություններն, անշուշտ, անհիմն չեն կատարվում:Այդ փոփոխություններևը կախված են ուսուցանվող նյութի, մեր առջև դրված նպատակների, խնդիրների և վերջիններիս լուծման ուղիների որոնման հետ: Այնուամենայնիվ, առավել ևս սովորողների համար, նման փոփոխությունները դժվարություններ են ստեղծում:

Հատկապես այն դեպքում, երբ սովորողը չի կարողանում հասկանալ կատարված փոփոխությունները, ուսումնական անհաջողություն է ունենում և նման իրավիճակը բացասական ազդեցություն է թողնում դպրոցականի առաջադիմության վրա:

Կատարվող փոփոխությունները դեռահասների մոտ կարող են շփոթության պատճառ հանդիսանալ:

Նման պարագայում սովորողը ուսումնական ձախողումից խուսափելու, ուսման առաջադիմության վրա բացասական ազդեցություն չունենալու համար, փորձում է ընկալել և հասկանալ իրավիճակը:

Այդ փոփոխությունների ընկալման փորձը ցավոք ոչ միշտ է հաջողությամբ ավարտվում:

Այսպիսով, աշխատության այս գլխում կխոսենք սովորողների ուսումնական ձախողումներին նպաստող պատճառների մասին և կփորձենք մեկնաբանել և վերլուծել դպրոցականի ուսումնական թերացումներին նպաստող հանգամանքները:

Ուսումնական ձախողում հասկացության վերլուծություն

Կրթական հաստատություններում մենք պարբերաբար հանդիպում ենք «ուսումնական ձախողում» արտահայտության կիրառմանը: Կարող ենք ասել, որ սովորողների առջև դրվում է որոշ պարտականություններ, որոնց ձախողումը կամ թերի կիրառումը կկոչենք ուսման ընթացքում ունեցած թերացում: Իսկ այդ ունեցած ձախողումների պատճառները կարող են բազմազան լինել:Անգամ դասավանդվող առարկաների ընկալումը կարող է դրական կամ բացասական ազդեցություն թողնել ուսման վրա և ուսումնական ձախողման պատճառ հանդիսանալ:

Օրինակ՝ վերցնենք դպրցականներին: Վերջիններս դպրոցում ունեն մի շարք պարտականություններ, որոնք պետք է պատշաճ կատարեն՝ թերացումներից խուսափելու համար: Սակայն դպրոցականներից մեկը կարող է չընկալել առարկան կամ թերի ընկալել և դա արդեն իսկ ուսումնառության գործընթացի խափանման պատճառ կհանդիսանա:

Եթե փորձենք սահմանել«ուսումնական ձախողում» արտահայտությունը ապա այն կհնչի հետևյալ ձևով՝ սովորողների և ուսանողների առջև դրված ուսումնական պլանի ձախողումը կոչվում է՝ «ուսումնական ձախողում»:

Սովորողի ուսումնական ձախողումների պատճառներից կարող են հանդիսանալ ոչ միայն առարկաների վատ ընկալումը, այլև դասընկերների, ուսուցիչների, ծնողների, մտերիմների հետ ունեցած փոխհարաբերությունների վատթարացումը:

Սովորողի և դասընկերների միջև փոխհարաբերությունների լարվածությունը կարող է պատճառ հանդիսանալ դասավանսվող առարկայի թերի հասկանալուն կամ ընդհանրապես չհասկանալուն: Հետևաբար, սովորողը ձախողում է ուսումնական պլանի պատշաճ կատարումը և ուսումնական ձախողումներ է ունենում:

Նմանատիպ է նաև սովորողի և ընտանիքի անդամների միջև փոխհարաբերությունների դեպքում: Եթե սովորողը ընտանիքի անդամների հետ լարված փոխհարաբերություններ ունի, ապա այն սովորողի առաջադիմության վրա բացասական ազդեցություն կունենա և ուսումնական ձախողման պատճառ կհանդիսանա:

Ուսումնական ձախողման, վատ սովորելու, վատ առաջադիմության վերաբերյալ արտահայտվել և բազմաթիվ վերլուծություններ են արել տարբեր անվանի մանկավարժներ և գիտնականներ: Վերջիններս տարբեր կարծիքներ են հայտնել ուսումնական ձախողումների վերաբերյալ՝ խոսելով տարբեր առանձնահատկությունների և տարիքային տարբերությունների մասին [2, էջ 226-232]:

Դպրոցներում և այլ կրթական հաստատություններում կարող ենք ասել, ուսումնական թերացում կրողը համարվում է ցածր առաջադիմություն ունեցող, որը կարող են լինել տարբեր տարիքային խմբերից:

Իսկ ո՞վ է համարվում ցածր առաջադիմություն ունեցող դպրոցական:

Ի. Պ. Պոդլասոգի կարծիքով ցածր առաջադիմություն ունեցող դպրոցականները նրանք են. ովքեր չեն կարողանում ցուցադրել գիտելիքների, հմտությունների, մտածողության արագության և գործողությունների կատարման այն մակարդակը, որոնք ցույց են տալիս իրենց կողքին սովորողները:

Սակայն, չպետք է միայն վերոնշյալը հիմք ընդունել և ասել, որ ուսումնական անհաջողության կոնտեքստում պետք է դիտարկել բոլոր այն սովորողներին, ովքեր չեն կարողանում դրսևորել նույն հմտությունները, առաջադիմության այն մակարդակը ինչ ցուցաբերել են իրենց դասընկերները: Քանի որ շատ վատ առաջադիմություն ունեցող սովորողներից էլ ևս ծնվում են հանճարներ [11]:

Վատ առաջադիմություն են ունեցել բազմաթիվ անվանի գիտնականներ, ովքեր մեծ հեղաշրջում կատարեցին գիտության մեջ:

``Այդպիսի գիտնականներից կարող ենք նշել Նոբելյան մրցանակակիր, ֆիզիկոս, հարաբերական տեսության հիմնադիր՝ Ա, էյնշտեյնին: Վերջինիս դպրոցում անգամ հետամնաց էին համարում և բոլոր ուսուցիչները համոզված էին, որ նա անգամ դպրոցը չի ավարտի:

Հանճարեղ գրող Ա. Չեխովը դպրոցում մի քանի անգամ նույն դասարանում է մնացել որոշ առարկաներից թերանալու պատճառով:

Դպրոցում առաջադիմությամբ աչքի չեն ընկել նաև Ու. Չերչիլը, Ա. Պուշկինը, Ու. Շեքսպիրը և շատ այլ ուրիշ ճանաչված գիտնականներ և գործիչներ:

Այսպիսով, վատ առաջադիմություն ունենալը կամ «ուսումնական ձախողում» հասկացության սահմաններում դիտարկվելը դեռ չի նշանակում գիտելիքի բացակայության դրսևորում:

Հաճախ տեսնում ենք սովորողների, ովքեր ուսումնական անհաջողություններ են ունենում, բայց դասարանի մյուս աշակերտների հետ համեմատած, ավելի խելացի են: Սակայն դպրոցականներին կարող են տարբեր հանգամանքներ խանգարել ունեցած գիտելիքները ցուցադրելու համար: Օրինակ՝ դասարանում բոլորի ներկայությամբ դասը ներկայացնելու կամ հարցադրումներին պատասխանելու ընթացքում, դպրոցականի մոտ կարող է անհանգստություն և լարվածություն առաջանալ, ինչը կխոչընդոտի տվյալ դասի կամ հարցերի վերաբերյալ ունեցած գիտելիքների ճիշտ և ամբողջական ցուցադրմանը:

Սեփական գիտելիքները ցուցադրել չկարողանալու պարագայում դպրոցականը ուսումնական ձախողում է կրում:

Նմանատիպ իրավիճակում սովորողը ունենում է ուսումնական ձախողում, երբ լարվածությունը կարող է խոչընդոտել դասը լավ ներկայացնելուն: Այսինքն՝ սովորողը լիովին տիրապետում է տվյալ թեմային, բայց չի կարողանում այն ներկայացնել:

Հետևաբար, ուսումնական ձախողումը չպետք է կապել գիտելիքի բացակայության, ինտելեկտի ցածր լինելու հետ:

Սովորողը կարող է գիտելիքների բարձր մակարդակ ունենալ, սակայն ինչ-ինչ պատճառներով հնարավոր է չկարողանա ցուցադրել իր իմացածը: Բնականաբար նման հանգամանքը կարող է բացասական ազդեցություն թողնել սովորողի առաջադիմության վրա: Նման պարագայում սկսվում է «ուսումնական ձախողում» հասկացության սահմաններում դիտարկվել: Չնայած նրան, որ դպրոցականը առավել շատ գիտելիքներ ունի դասավանդվող բոլոր առարկաներից քան իր հասակակիցները:

«Ուսումնական ձախողում» հասկացության սահմաններում պետք է դիտարկել նաև այն դպրոցականներին, ովքեր հետաքրքրություն չեն ցուցաբերում դասավանդվող առարկաների նկատմամբ, ալարկոտ են, վատ վարք ունեն և այլն:

Սովորողի մոտ դասավանդվող առարկան կարող է հետաքրքրություն չառաջացնել և վերջինիս անտարբերությունն էլ բացասական ազդեցություն կունենա ուսման վրա: Ինչպես դասավանդվող առարկայի նկատմամբ անհետաքրքրությունը, այնպես էլ ալարկոտությունը կնպաստեն ուսումնական գործընթացի ձախողմանը:

Մեկ այլ պատճառ ուսման մեջ թերացման համար կարող է հանդիսանալ նաև սովորողի ֆիզիկական վիճակը: Օրինակ՝ եթե սովորողը ֆիզիկապես իրեն լավ չի զգում, ապա ի վիճակի չէ առավել ուշադիր լինել ուսման նկատմամբ և ուսումնական ձախողում է ունենում:

Սովորողները ուսումնական ձախողում են ունենում նաև պարբերաբար կրկնվող բացակայությունների պատճառով: Երբ տարբեր պատճառներով դպրոցականները սկսում են բացակայել դասերից, ապա հետագայում չեն կարողանում լավ հասկանալ այն թեմաները, որոնք բացատրվել են բացակայության ընթացքում:: Շատ դեպքերում բացակայած աշակերտը հնարավորություն չի ունենում երկրորդ անգամ լսել հանձնարարված թեմայի վերաբերյալ դիտարկումները, ուստի չի կարողանում ճիշտ ընկալել, իսկ սխալ ընկալված թեման էլ կարող է բացասական ազդեցություն ունենալ ուսման առաջադիմության վրա:

Այստեղ մենք բախվում ենք մի խնդրի, որը ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպման խաթարող առաջնային խնդիրներից մեկն է հանդիսանում:

Սովորողների բացակայության թվի կրճատման նպատակով բոլոր երկրներում քայլեր են ձեռնարկվում: Սակայն, այդ քայլերը իրենց դրական արդյունքները չեն տալիս: Մինչ օրս էլ դպրոցներում առաջնային խնդիրը շարունակում է աշակերտների բացակայության խնդիրը համարվել:Իսկ ներկա իրավիճակում, երբ աշխարհը պարբերաբար բախվում է տարբեր տեսակի համավարակների տարածման կանխման նպատակով դասընթացները հեռավար դարձելու խնդրի հետ, սովորողներից շատերն անգամ հեռավար դասերին չեն կարողանում մասնակցել և սա արդեն իսկ ուսումնական ձախողում պետք է համարել:

Ուսման ընթացքում երեխաները ձախողումներ են ունենում նաև ցածր զարգացվածության մակարդակի պատճառով:

Գիտելիքների խորացման նպատակով աշակերտները ինչ-որ առումով պետք է նաև ինքնակրթությամբ զբաղվեն՝ ընթերցեն տարաբնույթ գրքեր, մասնակցեն տարբեր թեմաների շուրջ բանավեճերի և այլն, քանի որ հաճախ դասավանդվող առարկան բավարար չի լինում տվյալ նյութի վերաբերյալ խորը գիտելիքներ ձեռք բերելու համար: Իսկ սովորողներին սահմանափակ քանակությամբ գրականություն է հանձնարարվում՝ կարդալու և վերլուծելու համար: Ուստի սովորողը պետք է ինքնուրույն կարողանա գտնել նոր նյութեր, գրքեր, որոնք էլ ավելի կխորացնեն սովորողի գիտելիքները և կնպաստեն վերջինիս զարգացմանը: Նման պարագայում աշակերտը դրական առաջընթաց կունենա և կխուսափի ուսումնական ձախողումից:

Ուսումնական ձախողմանը նպաստում են նաև դպրոցականի խիստ զբաղվածությունը: Օրինակ, երբ ծնողներն իրենց երեխային տալիս են տարբեր խմբակների՝ պարապելու համար, և դպրոցականը սկսում է չհասցնել դպրոցի նյութի ուսումնասիրումը:

Կան աշակերտներ, ովքեր միանգամից 3-5 խմբակների կամ պարապմունքների են հաճախում և չեն կարողանում իրենց դասերը հասցնել: Հետևաբար, տվյալ սովորողները ուսումնական պլանից շեղվում են և ուսումնական թերացումներ են ունենում:

Նման պարագայում կարող ենք ասել, որ ծնողները ևս նպաստում են սովորողի մոտ առաջացած ուսումնական ձախողումներին: Քանի որ ծնողը երեխային կարող է տալ տարբեր խմբակների, որպեսզի երեխան կարողանա լավ սովորի և հասկանա դասավանդվող առարկաները, սակայն հակառակ ազդեցությունն է տեղի ունենում:

Նման իրավիճակից խուսափելու համար անհրաժեշտ է հաշվի առնել անհատ-սովորողի ունակությունները:

Այսպիսով, սովորողների ուսման վրա կարող են տարբեր հանգամանքներ ազդել և դառնալ ուսումնական ձախողման պատճառ:

Գիտնականների մեծ մասը տարիքային զարգացման առանձնահատկությունները հենց դպրոցի հետ են կապում: Որոշ գիտնականներ գտնում են նույնիսկ, որ դպրոցական տարիքը /6-10 տարեկան/ ոչ վաղ անցյալում է ձևավորվել, այն ժամանակներում, երբ

երեխաները սկսել են սիստեմատիկ կրթություն ստանալ: Սա անշուշտ, չափազանցություն է, բայց մի բան ճիշտ է, որ այս տարիքում հենց ուսումնառության ընթացքում են զարգանում հոգեբանական շատ ֆունկցիաներ՝ մտածողությունը, ուշադրությունը, հիշողությունը և այլն:

Այս տարիքում մտածողությունը թռիչքային զարգացում է ապրում, այն այլևս միայն պատկերացումներով չի իրականանում, հանակարգային բնույթ է ստանում, «շրջելիություն» է ձեռք բերում, այսինքն՝ հնարավորություն է ստեղծվում փոխել մտքի ուղղությունը, ասենք՝ վերադառնալ խնդրի նախնական պայմաններին:

Մարդու զարգացման ընթացքում մեծ դեր են խաղում անցումային և ճգնաժամային շրջանները, որոնք մեկ տարիքային փուլից մյուսին անցման բեկումնային կետ են հանդիսանում: Ճգնաժամերը մարդու զարգացման ուղու անքակտելի մասն են կազմում, որոնց հաղթահարումը հանգեցնում է նորագոյացությունների առաջացման:

Ուսումնական գործունեությունը փոխում է երեխայի զգացմունքների բովանդակությունը, նրանք դառնում են ավելի գիտակցված և զսպված: Դրական զգացմունքները այժմ առաջանում են ոչ միայն հաճելի խաղ խաղալուց այլ որոշակի մտավոր գործունեություն կատարելուց, դժվարություններ հաղթահարելուց, մրցակցությունից: Երեխան ծանոթանում է կյանքի տարբեր սոցիալական դերերի, նրա մոտ զարգանում են բարոյական զգացմունքները: Տեղի է ունենում առկա բարոյական նորմերի, կանոնների ինտենսիվացում: Այս գործընթացում կարևորվում է մեծահասակի դերը, որը կարող է ներկայացնել երեխային ընդունելի վարքաձևեր, նորմեր, կանոններ, զարգացնել բարոյական ինքնագիտակցությունը: 8-9 տարեկանում ի հայտ է գալիս զգացմունքների տարբերակում՝ վատն ու լավը փոխարինվում են տարբեր զգացմունքների գիտակցմամբ և արտահայտմամբ: Զարգանում են ինտելեկտուալ զգացմունքները՝ հետաքրքրությունը, զարմանքը, կասկածը, ճանաչման հաճույքը և այլն:

Ուսումնական գործընթացը, գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձեռքբերումը ենթադրում է սովորողի ինքնակառավարում, ինչը հնարավոր է իրականացնել լավ զարգացած կամածին ուշադրության դեպքում: Ուսման սկզբնական շրջանում երեխային գրավում է երևույթների միայն արտաքին կողմը, իսկ ուսուցչի դերը կայանում է նրանում, որ պարբերաբար ուղղորդի երևույթների էության ըմբռնման, հասկացման գործընթացում: Նպատակահարմար է, օրինակ, խնդրել երեխային ստուգել իր ընկերոջ կամ իր գրածը, համեմատել սկզբնական նյութի հետ, զննել և մտապահել առարկաների կարևոր բնութագրերը և այլն: Ուսումնական գործունեության ընթացքում մեծահասակների օգնությամբ երեխայի մոտ զարգանում են ուշադրության բաշխումը և տեղափոխելիությունը [2, էջ 37-39]:

Սովորողների ուսումնական ձախողումների սոցիալ-հոգեբանական պատճառները

Հոգեբանական գործոնների շարքում կան մի քանի ոլորտներ, որոնք ազդում են ուսուցման վրա՝ ճանաչողական, մոտիվացիոն և հուզական-կամային:

Ճանաչողական ոլորտում վատ առաջընթացի պատճառները կարող են լինել ուսանողների շրջանում ճանաչողական գործընթացների որոշակի որակների անբավարար ձևավորումը՝

- հիշողության զարգացման ցածր մակարդակ (տեսողական, լսողական, կինեստետիկ), որն ընկած է ուսուցման հիմքում,
- ուսուցման գործընթացում մտածողության ինքնուրույն ակտիվ աշխատանքի անբավարար կազմակերպումը և, որպես հետևանք, ձեռք բերված գիտելիքները գործնականում կիրառելու անհնարինությունը,
- ուշադրության, հիմնականում բաշխման և անջատման հատկությունների զարգացման անբավարար մակարդակ,
- վերապատրաստման ծրագիր կառուցել՝ առանց հաշվի առնելու աշակերտի ընկալման ակտիվ ալիքը (տեսողական, լսողական, կինեստետիկ):

Ուսումնական անհաջողության հիմնական պատճառները՝ պայմանավորված հուզական-կամային ոլորտից, կարող են լինել՝

- բարձր անհանգստություն, որը հանգեցնում է շեղված վարքի և կրթական գործունեության արդյունավետության նվազմանը,

- ինքնագնահատականը նույնպես ազդում է երեխայի դպրոցում հաջողությունների վրա: Ինքնագնահատականի ցածր մակարդակը խնդիրներ է ստեղծում ինչպես ուսումնական նյութի մշակման, այնպես էլ դասընկերների ու ուսուցիչների հետ հարաբերություններում: Անբավարար կամ բարձր ինքնագնահատականը կարող է նաև հանգեցնել կոնֆլիկտային իրավիճակների ուսուցչի և ուսանողի, ուսանողի և ուսանողի միջև: Համարժեք ինքնագնահատականի ձևավորումը կախված է երեխայի նկատմամբ ուսուցչի վերաբերմունքից և հասակակիցների խմբում նրա դիրքից:

- Նման կամային հատկանիշների բացակայությունը, ինչպիսիք են նախաձեռնողականությունը, անկախությունը և կազմակերպվածությունը, նույնպես կարող են բացասաբար ազդել երեխայի դպրոցական աշխատանքի վրա: Սակայն, ըստ Վ.Ա. Հանսենի, կամային որակների ձևավորումը կարող է իրականացվել միայն այն դեպքում, եթե երեխան դրական է վերաբերվում դպրոցին:

Ուսումնական ձախողումը կարող է կապված լինել նաև ուսման ցածր մոտիվացիայի հետ: Ըստ Ա.Լ. Սիրոտյուկ, ուսուցիչը պետք է իր առջև խնդիր դնի երեխաների մոտ ձեռք բերելու շարժառիթ ձևավորել՝ ստեղծելով հաջողության իրավիճակ, որը կապված է մոտիվացիոն ոլորտի հետ և որոշվում է երեխայի անհատականության հոգեբանական ասպեկտներով:

Անհաջողության սոցիալական պատճառները՝

Սոցիալական միջավայր - Վ.Մ. Աստապովը կարծում է, որ անհաջողությունը շատ դեպքերում կապված չէ ճանաչողական գործունեության խախտման հետ, այլ առաջին հերթին դպրոցում երեխաների անպատրաստության հետ, ինչը կրթական գործընթացի ցածր մակարդակի դեպքում կարող է հանգեցնել մանկավարժական անտեսման: Հաճախ անհաջողության պատճառը ընտանիքում անբարենպաստ կենսապայմաններն են, մեծահասակներից սովորելու և՝ վերահսկողության, և՝ օգնության բացակայությունը, ընտանիքում կոնֆլիկտները և ռեժիմի բացակայությունը:

Եզրակացություն

Այս հետազոտական աշխատանքի մասնագիտական գրականության տեսական վերլուծությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ դպրոցականների ուսումնական անհաջողությունների պատճառները կարող են բազմազան լինել, որոնք բացասական ազդեցություն են թողնում սովորողների առաջադիմության վրա:

Ուսումնական ջախողումների պատճառներից են հանդիսանում դասավանդող առարկաների ոչ լավ ընկալումը, ընտանիքի և դասընկերների միջև փոխհարաբերությունները, սոցիալ-հոգեբանական պատճառները և այլն:

Ուսումնական ձախողման, վատ սովորելու, վատ առաջադիմության վերաբերյալ արտահայտվել և բազմաթիվ վերլուծություններ են արվել տարբեր անվանի մանկավարժների, գիտնականների կողմից: Վերջիններս տարբեր կարծիքներ են հայտնել ուսումնական ձախողումների վերաբերյալ՝ խոսելով տարբեր գործոնների և տարիքային առանձնահատկությունների մասին:

Սովորողների ուսումնական ձախողեումներին կարող են նպաստել դպրոցականի վրա ազդող տարբեր հանգամանքներ: Դրանցից կարող են լինել սեփական «Ես»-ի դրսևորման ձևերը, դասավանդող նյութի մատուցումը, առարկաների ոչ լավ ընկալումը, դասընկերների, ուսուցիչների, մտերիմների հետ ունեցած փոխհարաբերությունները և այլն:

Ուսումնական ձախողումների սոցիալ-հոգեբանական պատճառներից պետք է կարևորել ագրեսիվությունը, որը երեխաների մոտ հաճախ կարող ենք նկատել առանց պատճառի: Սակայն, ագրեսիվ պահվածքի դրսևորմանը կարող են նաև մի շարք արտաքին գործոններ նպաստել: Այդ գործոններից կարող են լինել ինքնահաստատման համար ուղղված քայլերը և այլն:

Ձախողման պատճառ կարելի է դիտարկել նաև դեպրեսիայի դրսևորումը: Նման իրավիճակում դպրոցականները սկսում են մեկուսանալ, խուսափում են դասընկերների և մտերիմների հետ հանդիպումներից և շփումներից: Անշուշտ, նման իրավիճակը չի կարող նպաստել ուսումնական առաջադիմությանը:

Ամփոփելով, հարկ է նշել, որ ուսումնական ձախողումներին կարող են նպաստել բազմաթիվ պատճառներ և հանգամանքներ, ուստի անհրաժեշտ է սովորողի նկատմամբ անհատական մոտեցում ցուցաբերել, ինչը հնարավորություն

կստեղծի ազդել ուսումնական ձախողումների վրա և նպաստել աշակերտի առաջադիմությանը:

Ուշադրությունը և՛ ուսուցչական կազմի, և՛ընտանիքի կողմից, նրանց աջակցությունը բոլոր հարցերում հնարավոր կդարձնի խնդիրների լուծումը և կնպաստի ուսումնական գործընթացի ձախողման վերացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մելիք - Փաշայան Ա. Է., Հոգեբուժություն, Ե., 2012:
2. Մովսիսյան Ս., Ուսուցիչների դասավանդման ոճերով պայմանավորված ուսումնական մոտիվացիայի առանձնահատկությունները, <<ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու>>, N 1.2 (32), Ե., 2020:
3. Агеева Л. Г., Социально-психологическая дезадаптация цовременных школьников и ее причины, Ульяновск, 2010.
4. Бабанцкий Ю. К., Избранные педагогические труды, М., 1989.
5. Бардин, К. В., Если ваш ребенок не хочет ычиться (Методические указания), М., 1980.
6. Водяха Ю. Е., Водяьа С. А., Псиьология детей младшего школьного возраста, Екантеринбург, 2018.
7. Ворожбитова А. А., Шапкина С. А., Формипование готовноцти младших школьников к восприятию литературно - художественного произвадения на основе лингвориторического подхода, М., 2014.
8. Долгова А. Г., Агрессия у детей младшего возрата. Диагностика и коррекция, М., 2009.
9. Дубровина И. Б., Даниелова Е. Е., Толцтых Н. Н., Приьожан А. М., Андреева А. Д., Кравцова Е. М., Москвина О. А., Младший школьник. Развитие познавательныь цпоцобноцтей, М., 2003.
10. Качимская А. Ю., Психологическая безопасность личности и ее сопровождение в образовании, Иркутск, 2013.
11. Князева Т. Н., Псиьологическая система сопровождения готовности младших школьников к обучению в основной школе, Саратов, 2019.
12. Лебедев А. В., Личность и ее свойстжа, Санкт-Петербург, 2001.
13. Липкина А. И., Самооценка школьника, М., 1976.
14. Салмина Н. Г., Филимонова О. Г., Психологическая диагностика развития младшего школьника, М., 2006.
15. Хуьлаева О. В., Школьная психологическая служба (работа с учащимися), М., 2007.